

Մեղգոնեան

ՆԱՄԱԿ ԵՂՔԱՅՐՆ ԻՐ ԵՂՔՈՐ

Միրելի Պենոն Սեւան,
Ներէ ինծի եթէ այս նամակով կու գամ խանգարելու հոգիիդ խաղաղութիւնը, Մեղգոնեան Կրթական Հաստատութեան փակման որոշումին առիթով:

Եկուր միասին շուրջ յիսուն տարի ետ երթանք, դէպի այն գեղեցիկ պատանեկան օրերը, երբ դուն, ես եւ մեր ընկերները հասակ կ'առնէինք Մեղգոնեանի խաղաղ ու կապոյտ երկիրն քին տակ: Կը յիշե՞ս հաստատութեան սանսարատունը, երբ մեր փորձերը կը կատարէինք, դուն սաքոֆոնի վրայ, իսկ ես թրոմփէթի վրայ, ու ամէն Մայիսին, Մակարափանքի ուխտի օրուան, Մեղգոնեանի փողերախումբով կը խանդավառէինք ուխտաւորները, խմբավար Վահան Պէտէլեանի առաջնորդութեամբ: Հաւանաբար այդ օրերը մոռցած ես: Կը յիշե՞ս, երբ Մեղգոնեանի դաշտին վրայ հուժկու սրունքներով ֆութպոլի գնդակը կը հարուածէիր, ան կը հասնէր դաշտին մէկ ծայրէն միւսը, առիթ տալով Միքայէլ Նազգաշեանին գեղեցիկ կող մը նշանակելու հակառակորդին բերդէն ներս: Թերեւս մոռցած ես: Կը յիշե՞ս այն երջանիկ օրերը, որ կ'ապրէիր դուն ընկեր-ընկերուհիներով, ըլլալ դասի պահերուն եւ կամ գրասանքի ժամերուն. վստահ եմ՝ չես յիշեր: Կը յիշե՞ս այն տարիները, երբ տակաւին կը կրէիր Գուլումճեան մականունը եւ իբրեւ վատոյժ պատանի սկսար սանդխամատ առ սանդխամատ բարձրանալ Մեղգոնեանի իւրաքանչիւր դասարանէն, կազմուելով եւ զօրանալով մարմնապէս, հոգեպէս եւ մտովին, օր մըն ալ հասնելու համար Միացեալ Ազգերու կազմակերպութեան ամենաբարձր գաղաթնները, Պենոն Գուլումճեանէն դառնա-

լով Պենոն Սեւանի. վստահ եմ չես յիշեր: Կը յիշե՞ս այն օրերը, երբ Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը Լիբանանի Պիքայայի բարձրունքին վրայ կուրծքդ կը զարդարէր «Կիլիկեան իշխան»-ի շքանշանով եւ դուն կը խոստովանէիր, որ կեանքիդ բոլոր յաջողութիւնները կը պարտէիր Մեղգոնեանին, որ քեզի տուաւ ամէն ինչ. կրթութիւն, ուսում, ինքնավստահութիւն եւ հպարտութիւնը հայ ըլլալուդ: **Չէ**, վստահ եմ, չես յիշեր:

Այս օրքա՞ն հոգեկան անկում, երբ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութեան 15 գործակերներուդ հետ կը ստորագրէիք մահապաշտօն սիրեցեալ վարժարանիդ: Արդեօք վարչկեան մը ձեռքդ չդողա՞ց, արդեօք պահ մը աչքերուդ առջեւ չերեւացի՞ր Մեղգոնեան բարերարներուն բարի դէմքերը: Ինչ կարեւորութիւն ունէր միւս ընկերներուդ համար, թէ Մեղգոնեանը գոյութիւն ունեցեր է կամ ոչ: Հաւանաբար անոնցմէ շատեր Մեղգոնեանին ուր ըլլային անգամ չեն գիտեր:

Բայց քեզի համար Մեղգոնեանը քու էութեանդ մէկ մասնիկն է ու տարին 365 օր անով կ'ապրիս: Արդեօք օր մը հանգիստ խղճով պիտի կարենա՞ս քնանալ, երբ գիտես որ այլեւս գոյութիւն չունի երկրի վրայ Մեղգոնեանը:

Ո՛չ, ինծի համար այնքան մեծ ցաւ չէ, երբ բարեկշիռ շատակ եւ դպրոցաչէն նախագահին թափուր ձգած աթոռին վրայ կը բազմի իր սիրելի դուստրը, որ կրթական հաստատութիւն մը կը շփոթէ վաճառատան մը հետ եւ անշահաբեր կրթական օժանդները մի առ մի կը սկսի փակել:

Ինծի համար այնքան մեծ ցաւ չէ, երբ Հ.Բ.Լ.Մ.-ի նորընտիր նախագահը, որ նախ քան նախագահութեան հասնիլը փառաբանողն ու ջատագովողն էր

Շարունակութիւնը էջ 11

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 90-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ «ԱՐԱՐԱՏ»-Ի ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆՔԸ

Յառաջիկայ տարի.- 2005.- Մեծ Եղեռնի 90-ամեակն է. որուն ոգեկոչումը պիտի կատարուի արժանավայել միջոցառումներով:

«Արարատ» Մեծ Եղեռնի ոգեկոչման իր մասնակցութիւնը կ'ուզէ բերել անոր ուսումնասիրման նուիրում պատմական նոր երկասիրութիւններով. իբր յատկութեամբ Մեծ Եղեռնի պատմագրական գրականութեան:

«Արարատ» այս առիթով բացուած կը յայտարարէ պատմագրական մրցանք մը, որուն կրնան մասնակցիլ հայրենիքէն թէ Սփիւռքէն մտատրականներ եւ պատմաբաններ. հետեւեալ պայմաններով.-

Ա. Անտիպ գրութիւնները (նախընտրաբար համակարգիչի վրայ շարուած) «Արարատ»-ի խմբագրութեան հասնելու են մինչեւ 31 Յունուար, 2005:

Բ. Ուսումնասիրական աշխատանքի համար ծաւալ նախատեսուած է չորս պրակ (22 սմ. եւ 15 սմ.):

Գ. Ուղղարկուած գրութիւնները չեն վերադարձուիր:

Դ. Ուսումնասիրութեան համար նախատեսուած են հետեւեալ ոլորտները.-

- 1. Յեղասպանութեան ծրագրումը եւ գործադրութիւնը:
- 2. Ինքնապաշտպանական կռիւներէն,- ուսումնասիրողին կողմէ նախասիրաբար,- մէկուն պատմական եւ փաստագրական արժեւորումը:
- 3. Յեղասպանութեան միջազգային ճանաչման հոլովոյթը:

4. Յեղասպանութեան մարդկային իրաւանց անկիւնէն մօտեցումը՝ ՄԱԿ-ի սկզբունքներու լոյսին տակ:

5. 20-րդ դարու ցեղասպանութիւնները՝ հայկականին հետ բաղդատական գուգահեռով:

6. Յեղասպանութեան իրաւական հիմքին վրայ Հայկական Դատի հետապնդման համահայկական կարելիութիւններու պատկերացումը՝ առաջարկներու նոր բանաձեւումով:

7. Իթքիստ կուսակցութեան գաղափարախօսութիւնը:

Ծանօթ. Լաւագոյն երկու ուսումնասիրութիւնները հրատարակուել բացի, անոնց հեղինակները նիւթական պարգեւներ պիտի ստանան:

Յանձնախումբին կազմը՝
Դոկտ. Զաւէն Մսրըլեան, Պրն. Ժիրայր Դանիէլեան, Դոկտ. Երուանդ Քասունի

Հասցէ՝
Ararad Daily Newspaper
P. O. Box 175275
Mar Mikhael
Beirut-Lebanon
E-mail: ararad@terra.net.lb

«ԱՐԱՐԱՏ»-Ի ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ

2005 ԹՈՒՎԱԿԱՆԸ

«ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ»

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարեկան-քին մէջ խանդավառ մթնոլորտի մէջ փակուժը կատարուեցաւ «Հայեցի Դաստիարակութիւնը Սփիւռքի Մէջ» թեմային շուրջ կազմակերպուած համասփիւռքեան համագումարին: Անցնող օրերու ընթացքին, համագումարին մասնակիցներ եւ հայեցի դաստիարակութեամբ մտահոգ մտաւորականներ ու ուսուցիչներ Մեզի ուղղած իրենց նամակներով ինչպէս նաեւ մամուլի ճամբով իրենց խոր գոհունակութիւնն ու գնահատանքը յայտնեցին վերոյիշեալ եզակի նախաձեռնութեան համար:

Հիմա որ այլեւս համագումարը անցեալին կը պատկանի, նախ անհրաժեշտ կը գտնենք հպանցիկ կերպով կարգ մը ընդգծումներ կատարել:-

Առաջին, համագումարի մասին եղած բոլոր դրական վկայութիւնները, անձնական թէ հրապարակային, արդար են ու ճշմարիտ: Ամէն բանէ առաջ համագումարը որակ ունեցող հաւաք մըն էր՝ մասնակցողներու հարուստ փոճառութեամբ, հայեցի դաստիարակութեան նկատմամբ անոնց ունեցած նախանձախնդրութեամբ ու մանաւանդ համագումարին անոնց բերած գործօն մասնակցութեամբ յատկանշուող: Բազմաթիւ համագումարներու մասնակից դարձած ենք. սակայն միայն քիչ առիթներով ժողովականներուն մօտ տեսած ենք այսքան լուրջ մտահոգութիւն, յանձնառու մասնակցութիւն ու փոխադրած հասկացողութիւն: Արդարեւ, հարցերուն համապարփակ, քննական ու ինքնաքննադատական մօտեցումը եւ իրապաշտ տուեալներով ու տրամաբանական դասաւորումով անոնց վերլուծումը այնքան յատկանշական էր ու տիրական ողջ համագումարի ընթացքին:

Երկրորդ, համագումարին ներկայ էին ո՛չ միայն հայեցի դաստիարակութեան մարզէն ներս փորձառութիւն ու պատակ ունեցող անձեր, այլ նաեւ Սփիւռքի տարբեր միջավայրերուն մէջ կրթական ծառայութիւն ունեցող եւ ազգային իմաստով տարբեր շրջանակներու պատկանող ազգայիններ: Այս զանազանութիւնը համագումարին ամենէն հարստացուցիչ երեւոյթներէն մէկն էր: Ան առիթ ընծայեց հարցերը աւելի լայն մաշտապով քննելու ու նաեւ տարբեր փորձառութիւններ, մտահոգութիւններ ու հայեցակէտեր փոխանակելու: Եւ աւելին, համագումարը առիթ մըն էր, օրինակի համար. ո՛չ միայն Աւստրալիոյ ու Հայկազի մէջ կրթական նոյն ծառայութեան նուիրուած մշակներ քով-քովի բերելու, այլ նաեւ, ներկաներո՛ւն իսկ վկայութեամբ, Աթէնքի կամ Լոս Անձելլոսի նոյն քաղաքի նոյն շրջանին մէջ ծառայող, սակայն ինչ-ինչ պատճառներով տասնամեակներ իրարմէ հեռու մնացած, կրթական մշակներ ու մտաւորականներ քով-քովի բերելու ու անոնց միջեւ հասարակաց մտահոգութիւններու շուրջ երկիւստութիւն ստեղծելու:

Երրորդ, համագումարին որակ ու նկարագիր տուող յատկանշական երեսներէն մէկը եղաւ նաեւ հոն պարզուած համագործակցութեան ոգին: Տարբեր գաղութներէ եկած եւ տարբեր փորձառութիւններով ու գաղափարական կազմաւորումներով թրծուած անձեր համարեալ նոյն մօտեցումը ունեցան հայեցի դաստիարակութեան առնչուած հիմնական հարցերուն նկատմամբ: Անոնք նոյն արժէքներու կառչած էին. նոյն ուղղութեամբ կը նայէին. նոյն նպատակը կը հետապնդէին՝ երբեմն տարբեր շեշտաւորումներով: Արդարեւ, հայեցի դաստիարակութեան ամբողջականութիւնը պահելու ու ամբողջականութիւնը ներդաշնակ զանազանութեամբ արտայայտելու ճիգը համագումարին ամենէն տիրական երեւոյթներէն մէկն էր: Այս երեւոյթը պէտք է օրինակ ծառայէ մեր կեանքի բոլոր մարզերէն ներս:

Այս կը պահանջեն մեր ազգը յուզող խնդիրները: Հայեցի դաստիարակութիւնը անոնցմէ մէկն է:

Համագումարի մասնակիցներուն անգամ մը եւս կը յայտենանք Մեր բարձր գնահատանքը: Մեր ջերմ գնահատանքը նաեւ Գալուստ Կիւլպէնեան Հիմնարկութեան Հայկական Բաժնին, որ վերանորոգ յանձնառութեամբ կը շարունակէ մնալ գործակից ու մասնակից մեր կրթական աշխատանքներուն ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի:

Համագումարի փակման Մեր խօսքին մէջ ըսինք.- Անցնող երեք օրերու ընթացքին հարցեր քննարկեցինք, մտահոգութիւններ բաժնեցինք, տեսակէտներ արտայայտեցինք: Այս բոլորէն ետք ի՞նչ...: Նման նախաձեռնութիւններ սկսիլը դժուար է, սակայն շարունակելը շատ աւելի դժուար: Այս դէպքը պէտք է վերածուի մնայուն ընթացքի: Տազնապը պէտք է վերածուի ծրագրի ու ծրագիրը կեանքի: Հայեցի դաստիարակութիւնը մեր ազգին ու յատկապէս Սփիւռքի հայութեան օրակարգի ամենէն հրատապ խնդիրներէն մէկն է: Սփիւռքի ապագան պայմանաւորուած է հայեցի դաստիարակութեամբ:

Արդ, ժամանակն է որ միասնաբար մտածենք համագումարէն ետք ընելիքներու մասին: Մեր կարծիքով համագումարին պէտք է յաջորդէ ծրագրուած գործընթաց մը, որ կարենայ՝ ա) հայեցի դաստիարակութեան առաջնահերթութիւնը միշտ պահել առկայ մեր գաղութներու ու կառույցներու կեանքէն ներս, բ) հայեցի դաստիարակութեան աշխատանքները դարձնել աւելի կազմակերպ ու արդիւնալից ներ-գաղութային ու միջ-գաղութային ծիրէն ներս, գ) հայեցի դաստիարակութիւնը դարձնել հրապուրիչ թէ՛՜ զայն ստացողներուն եւ թէ՛ զայն կատարողներուն համար:

Վերոյիշեալ գործընթացքը Մենք կը պատկերացընենք հետեւեալ կերպով ու հանգրուաններով.-

1. Ամէն բանէ առաջ համագումարի ընթացքին տրուած գեկուցները ու կատարուած քննարկումները ընդգրկող հատոր մը շուտով պիտի հրատարակուի: Համագումարին ամբողջական պատկերը նեկայացնող այս գիրքը պիտի տրամադրուի կրթական մշակներուն ու հայեցի դաստիարակութեան գծով հետաքրքրութիւն ունեցող մտաւորականներուն: Սպասելի է որ հոն արծարծուած նիւթերը ու արտայայտուած տեսակէտները նիւթ դառնան հրապարակային քննարկումներու՝ այս ձեւով համագումարը վերածելով շարունակուող ընթացքի մը:

2. Համագումարին ուղղած Մեր պատգամին մէջ շեշտեցինք, թէ անհրաժեշտ է որ Հայաստան եւ Սփիւռք միասնաբար մշակեն հայեցի դաստիարակութեան համապարփակ քաղաքականութիւն մը, ուր ճշդուին այն հիմնական սկզբունքները, որոնք հիմքը պէտք է կազմեն հայեցի դաստիարակութեան մեր ըմբռնումներուն ու համոզումներուն: Այս ծիրէն ներս Սփիւռքի մէջ կատարուելիք հայեցի դաստիարակութեան իւրաքայտութիւնը իր բոլոր տարածքներով, մօտեցումներով ու մեթոտներով հարկ է կարեւորութեամբ նկատի ունենալ: Անհրաժեշտ է նաեւ որ յստակեցուի Հայաստանի մասնայատուկ դերը այս ուղղութեամբ:

3. Սփիւռքը պէտք է մշակէ հայեցի դաստիարակութեան ընդհանուր ուղեգիծ մը՝ նկատի ունենալով ներկայ աշխարհի յարափոփոխ պայմանները ու մարտահրաշխանքները: Նման աշխատանքի մը սկիզբը դրուեցաւ համագումարին: Ան պէտք է շարունակուի շրջանային ծիրէն ներս՝ մօտ ապագային իր վերջնական ձեւը ստանալու համար համասփիւռքեան երկրորդ համագումարի մը ընթացքին: Մինչ այդ, սակայն, մեր գա-

դուժները չըջապատող միջավայրային տարբերութիւնները, կրօնամշակութային ու ընկերաքաղաքական ազդակները յատուկ զգայնութեամբ եւ զգուշաւորութեամբ պէտք է նկատի առնուին մանկավարժական կազմաւորումներու ու յատկապէս դասագրքերու եւ կրթական ծրագիրներու պատրաստութեան աշխատանքներուն ընթացքին:

4. Սփիւռքի մէջ հայեցի դաստիարակութեան պարզած ներկայ իրավիճակը ամբողջականօրէն, յատկօրէն ու մանրամասնօրէն պարզող թղթածրարի մը պատրաստութիւնը անյետաձգելի անհրաժեշտութիւն մըն է: Գիտական ու քննական մօտեցումով պատրաստուած ու դասաւորուած այս թղթածրարը պէտք է մեկնակէտը ու աւանցքը հանդիսանայ յառաջիկայ աշխատանքներուն: Նման աշխատանքներու մէջ լայն փորձառութիւն ձեռք ձգած կրթական մշակի մը արդէն պարտականութիւն տուած ենք ձեռնարկելու յիշեալ աշխատանքին:

5. Համագումարի ընթացքին ու նաեւ Յայտարարութեան մէջ շեշտուեցաւ հայագիտական նիւթերու ու հայերէնով դասաւանդուող նիւթերու յատուկ նոր դասագրքեր ունենալու եւ մանկապատանեկան գրականութեան զարկ տալու հրամայական կարիքը: Արդէն իսկ որոշած ենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան-Գալուստ Կիւպէնկեան Հիմնարկութիւն միասնաբար հրատարակելու նոր պատրաստուած այն բոլոր դասագրքերը, որոնք Սփիւռքի մէջ տուեալ տարածաշրջանի մը պատկանող բոլոր հայ դպրոցներէն ներս պիտի գործածուին: Նոյն մօտեցումը պիտի ունենանք մանկապատանեկան գրականութեան նկատմամբ:

6. Համագումարը լայնօրէն անդրադարձաւ ուսուցիչներու թոշակներուն ու ընդհանրապէս անոնց կենսամակարդակին առնչուած շարք մը մտահոգութիւններուն:

7. Անհրաժեշտ է որ Սփիւռքի մէջ գործող կրթական մարմիններու ներկայացուցիչները մնայուն կառույցի մը շուրջ եւ կամ հերթաբար համախմբուին՝ շրջանային ու տեղական մակարդակներու վրայ, միասնաբար ճշդելու կրթական գործակցութեան գործնական միջոցները: Մեր կարծիքով, նկատի ունենալով Սփիւռքի մէջ գոյութիւն ունեցող միջավայրային սակայ տարբերութիւնները, հայեցի դաստիարակութեան գծով գործակցութիւնը տեղական եւ շրջանային մակարդակներու վրայ աւելի ազդու ու արդիւնաշատ կրնայ դառնալ: Չմոռնանք, որ հայեցի դաստիարակութիւնը բոլորին տաքնապն է: Շատ բան կայ գոր կրնանք միասին կատարել: Վաղուան սերունդը կրնայ մեզ այգանել, եթէ մենք տկարանանք մեր ճիգին մէջ եւ խուսափինք մեր հաւաքական պատասխանատուութենէն:

8. Եւ վերջապէս, որպէսզի մեր եկեղեցին, մեր կազմակերպութիւնները ու միութիւնները եւ մեր ժողովուրդի զաւակները լրջօրէն անդրադառնան հայեցի դաստիարակութեան այնքան հրամայական ու կենսատու անհրաժեշտութեան, որոշած ենք 2005 տարին Հայրապետական Գիրով հռչակել «Հայեցի Դաստիարակութեան Տարի»: Այս առիթով պիտի թելադրենք որ մեր ժողովուրդը զօրաշարժի ու ինքնագիտակցութեան մղելու կոչուած 2005 տարուան ընթացքին, զանազան ձեռնարկներու ճամբով գործնապէս վերաշէշտէ հայեցի դաստիարակութեան առանցքային տեղը ու վճռական դերը իր հաւաքական կեանքին մէջ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը խորապէս կը հաւատայ որ հայեցի դաստիարակութիւնը Սփիւռքի գոյատեւման, Հայաստան-Սփիւռք գործակցութեան ամրապնդման, մեր ժողովուրդի գերագոյն իտէպլնեղուն իրագործման եւ անոր յաւերժութեան ամենէն հզօր երաշխիքներէն մէկն է: Այս համոզումով ու հեռնկարով կազմակերպեցինք Համափիւռքեան Կրթական Համագումարը: Նոյն գիտակցութեամբ պիտի շարունակենք մեր Ս. Աթոռին աշխատանքը այս բնագաւառէն ներս:

ԱՐՄԱ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՆԱՍԱԿ ԵՂԱՍՅՐՆ ԻՐ ԵՂՅՕՐ
(Շարունակուած էջ 9-էն)

Մեղգոնեան Կրթական Հաստատութեան, հագիւ գահին նստած, կը սկսի զգայացունց յայտարարութիւններու, թէ՛ նոր դարու պահանջներու գոհացում տալու համար Հ.Բ.Ը.Մ-ը 21-րդ դարուն սկիզբը վերատեսութեան պիտի ենթարկէ իր բոլոր գործունէութիւնները: Այսինքն՝ հինը քանդել (ոչ հինցածը) եւ նորը կառուցել՝ հիմք չունեցող ծրագիրներով:

Ո՛չ, ինծի համար այնքան մեծ ցաւ չէ, երբ անգլիախօս անձ մը կը նշանակուի իբր Հ.Բ.Ը.Մ.-ի հայ դպրոցներու կրթական պատասխանատու, որ ոչ միայն ծանօթ չէ հայ դպրոցներուն անցուցած տագնապներուն, այլ նաեւ կապանքի են իր ունեցած կարողութիւնները կրթական մարզէն ներս:

Միւրեւի եղբայրս Պենոն, ինծի համար այնքան մեծ ցաւ չէ, երբ աւանդական կուսակցութեան մը կեդրոնական վարչութիւնը կը յայտարարէ, որ այլեւս ժամանակն է որ փակուի Մեղգոնեանը, այն կուսակցութիւնը, որուն Մեղգոնեանը տուած եւ մինչեւ այսօր կու տայ իր լաւագոյն մտաւորականները եւ դեկավարները:

Միւրեւի Պենոն, ինծի համար այնքան մեծ ցաւ չէ, երբ Կիպրոսի հայ համայնքը, որուն մէկ մասնիկն են դուն, ընկրմելու վրայ է, իսկ անոր տէրն ու հովանաւորողը՝ Կիլիկիոյ Աթոռի գահակալը, որ կայք հաստատած է Լիբանանի մէջ, քար լուծութիւն կը պահէ:

Ո՛չ, սիրելի եղբայրս Պենոն, ինծի համար մեծ ցաւ չէ, երբ ոչ մէկ ձայն կը լսուի Ս. Էջմիածնի Աթոռի գահակալէն, որ Հ.Բ.Ը.Մ-էն վերջ կու գայ երկրորդը, տնօրինելու Մեղգոնեանի ճակատագիրը, երբ առաջինը ձախող իր առաքելութեան մէջ:

Հաւանաբար այն սկիզբալիքով, որ հաստատութեան ոսկի բանալիները իրեն պիտի յանձնուին:

Միւրեւի եղբայրս Պենոն, ինծի համար մեծ ցաւ չէ, երբ հայրենի պետականութիւնը ամէն ճիգ կը թափէ կողմնորոշուելու Հ.Բ.Ը.Մ.-ի կողքին՝ հաստատութիւնը լուծարքի ենթարկելու անոր որոշումին մէջ, անշուշտ բաժին լուսալով, բայց աւա՛ղ, մոռնալով որ այսօր կը քանդուի Սփիւռքի գոյատեւման պայքարի ամենակենսական կուռններէն մէկը:

Ինծի համար մեծ ցաւ չէ, երբ կը տեսնեմ Կիպրոսի բարեջան կառավարութիւնը, որ հեռատես կողմնորոշումով ամէն ճիգ կը թափէ Մեղգոնեան Հաստատութիւնը կանգուն պահելու, մինչ օտարին կառքին լծուած մեր պատասխանատուները անոր փոսը կը փորեն:

Այ՛ո, ինծի համար մեծ ցաւ է, սիրելի եղբայրս Պենոն, երբ 80 տարեկան սաղարթախիտ կաղնին կը տապալի: Ուսման կենսատու կեդրոն մը, իր ունեցած ամբողջ նիւթաբարոյական հարըստութիւնով, մէկ օրէն միւսը փոշիի կը վերածուի:

Յա՛ւ է, երբ ամէն օր հայապահպանման մասին կը խօսինք, բայց կը քանդենք հայապահպանման ամենամեծ կեդրոններէն մէկը:

Յա՛ւ է, երբ Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Ժողովին ինքնագլուխ եւ անխոհեմ մէկ որոշումով փուլ կու գայ բերքով հարուստ, արմատներով առողջ ու ապագային նայող կրթական հայ օճախ մը, իր հետ բերելով անհաշիւ վնասներ մեծ Միութեան վարկին եւ հայ ժողովուրդի գոյատեւման պայքարին:

Յա՛ւը մե՛ծ է, երբ կը տեսնեմ հազարաւոր հայորդիներուն մտքի եւ մարմնի ստուղ տուող «Լուսոյ Տաճարին» անգթօրէն քանդուիլը, շիջումով մեծ երագին՝ ազնուագոյն եւ ազգանուէր բարերանք Կարապետ եւ Գրիգոր Մեղգոնեան եղբայրներուն:

Միւրեւի եղբայրս Պենոն, պէտք չէ մտահան ընել, թէ պատմութեան մէջ իշխանները կը կերտուին իրենց սասկետական արարքներով եւ ոչ թէ շքանշաններով:

Եղբայրդ՝
ՉԱԻԷՆ ՂԱՐԻՊԵԱՆ

«ՆԻՒ ԵՈՐՔ ԼԱՅՖ» ՊԵՏՔ Է ՀԱՏՈՒՅԷ
20 ՄԻԼԻՈՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏՈՒՐ
(Շարունակուած էջ 5-էն)

երբ կը կրեն նամակատան կողմէ կնքուած՝ մինչև 16 Մարտ 2005 թուականը: Օրինակի համար եթէ ձեր առաքած դիմումը նամակատան կնիքով կը կրէ Մարտ 16 թուականը եւ տեղ կը հասնի Ապրիլին ընդունելի պիտի համարուի:

Դիմումները պէտք է առաքուին համաձայնագրի պաշտօնական կայքէջին վրայ նշուած հասցէին: Կայքէջի հասցէն է www.armenianinsurancesettlement.com: Այնտեղ կը գտնուի նաեւ ցանկը բոլոր անոնց, որոնք կեանքի ապահովագրութիւն առած էին «Նիւ Եորք Լայֆ» ընկերութեան շուրջ դար մը առաջ: Հետեւաբար, առաջին հերթին պէտք է ստուգել անուանացանկը եւ երբ դուք ձեզ համարէք ժառանգորդ մէկ կամ մէկէ աւելի պայմանագիրներու, պէտք է հետեւիք կայքէջին վրայ նշուած ցուցմունքներուն եւ ձեր դիմումները այդ ձեւով առաքէք նախքան ժամկէտի աւարտը:

Ինչպէս յիշած էի քիչ առաջ, անհատուց մնացած պայմանագիրներու թիւը շուրջ 2300 է: Այս թիւը պատահականօրէն չէ որ գոյացած է: Պատմական կարծակնարկ մը նետելու համար ըսենք, որ «Նիւ Եորք Լայֆ» լայնածաւալ գործունէութիւն ունէր Օսմանեան Կայսրութեան տարածքին: Անոր յաճախորդութեան գերակշիռ մասը կայսրութեան քրիստոնէալ բնակչութիւնն էր հայեր, յոյներ, ասորիներ եւ այլն: «Նիւ Եորք Լայֆ» մեզի տրամադրած էր շուրջ 40էն 50 հազար արխիւային նիւթեր այդ ժամանակաշրջանի իր գործունէութեան վերաբերեալ: Այս արխիւները պէտք է ըսել բաւական հարուստ են իրենց ներկայացուցած պատմական տուեալներով: Հոն հանդիպած ենք, օրինակի համար, արխիւային փաստաթուղթերու այսինչ կամ այնինչ հայորդի սպանութեան կամ տարագրման մասին: Կը հանդիպինք նաեւ այնպիսի տեղեկութիւններու, ինչպէս օրինակ պայմանագրուողի ճշգրիտ հասցէն, ծննդեան թուականը, արհեստը, տեղեկութիւններ որոնք այլպէս բնաւ կարելի պիտի չըլլար ձեռք բերել:

1915-ին պատերազմի թոճուեցին մէջ «Նիւ Եորք Լայֆ» դադրեց իր գործունէութիւնը կայսրութեան մէջ պահելով միայն անձնակազմեան կորիզ մը, որ կը գործէր ամերիկեան դեսպանատան շրջափակէն ներս: 1921-ին «Նիւ Եորք Լայֆ» կ'որոշէ ամբողջովին դուրս գալ նաեւ Եւրոպայէն եւ այդ առիթով Օսմանեան Կայսրութեան մէջ վաճառած իր բոլոր պայմանագիրները կը ծախէ ֆրանսական "L'Union Vie" ընկերութեան: Այս մասին կը տեղեկացնէ նաեւ իր հայ յաճախորդներուն, որ սակայն արդէն շատ ուշ էր, տրուած ըլլալով որ անոնցմէ շատեր կամ սպաննուած եւ կամ տեղահանուած էին դէպի արաբական անապատները:

Ատով հանդերձ պէտք է ըսել, որ յետ-պատերազմի տարիներուն եղան հայցուորներ, որոնք դիմումներ ներկայացուցին ընկերութեան եւ հատուցուեցան: Սակայն ասոնց թիւը հազիւ քանի մը հարիւր կը հաշուէր: 1928-ին Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը փորձ մը ըրաւ Օսմանեան Կայսրութեան մէջ աշխատող ապահովագրական ընկերութիւններէ հատուցում մը պահանջելու, սակայն ապարդիւն: Օրին, այս միտքը յղացած էր Սահակ Կաթողիկոսը: 1928-ին Երջանկայիշտակ Սահակ Կաթողիկոս նամակ մը ստացած էր Բարեգործական Միութեան Փարիզի գրասենեակէն, ուր կը պահանջուէր ներկայացնել ցանկը Սիւրի Կաթողիկոսութեան կրած նիւթական բոլոր կորուստներուն, համապատասխան կալուածային փաստաթուղթերով: Պատասխանելով այս նամակին Սահակ Կաթողիկոս ըսած էր որ դժբախտաբար նման փաստաթուղթեր իրենց մօտ գոյութիւն չունէին: Այս առիթով, սակայն ան նշած էր, որ ազգօգուտ գործ պիտի

ըլլար պահանջել ցանկը այն բոլոր հայորդիներուն, որոնք կեանքի ապահովագրութիւն գնած էին եւրոպական կամ ամերիկեան ընկերութիւններէն, որպէսզի կարելի ըլլայ որբանոցներուն եւ կամ հիւղաւաններու մէջ դանել անոնց ժառանգորդները: Փորձը կը կատարուի Ազգերու Լիկայի հովանիին տակ գործող Ֆրիտոմֆ Նանսէնի յանձնաժողովին միջոցաւ: Նամակներ կ'ուղարկուին մեծ թիւով ընկերութիւններու, սակայն աշխատանքը կը մնայ ապարդիւն:

Վերադառնալով շուրջ 2300 պայմանագիրներու ճշդորոշման հարցին, առկա արդիւնքն էր «Նիւ Եորք Լայֆ»-ի տրամադրած արխիւներու մանրակրկիտ քննութեան: Ինչ կը վերաբերի համաձայնագիրի 20 միլիոն գումարային արժէքին, նախ ըսենք որ օրին գրուած այս պայմանագիրներու դրամական արժէքները անգլիական փառնաով եւ կամ ֆրանսական ֆրանսով էին: Այս գումարները ամերիկեան տոլարի վերածելէ ետք լրիւ այս պայմանագիրներու դրամային արժէքը կը հասնէր մօտ մէկ միլիոն հարիւր հազար տոլարի սահմաններուն: Բոլոր այս պայմանագիրներու միջին դրամային արժէքը մօտաւորապէս 400 ամերիկեան տոլար է: Նկատի ունենալով մօտ 90 տարուան ամերիկեան տոլարի արժեզրկման չափը, վերոնշեալ մէկ միլիոն տոլարը պէտք է բազմապատկել 18 անգամով: 20 միլիոն տոլարի հատուցումով համաձայնելու հիմնական դրդապատճառները այս հաշուարկներով պէտք է բացատրել: Աւելցնենք նաեւ որ կեանքի ապահովագրութիւններու պարագային անոնց դրամային արժէքը տոկոսներու յաւելման ենթակայ չէ: Ի բացառեալ այն պարագաներէն՝ երբ տուեալ հայցուորը ներկայացուցած է իր դիմումը ապահովագրական ընկերութեան եւ այս վերջինը գանազան պատճառներով ուշացուցած է հատուցման փոխանցումը հայցուորին. սակայն անշուշտ ըստ ամերիկեան օրէնքներու:

Դատական այս գործի սկսման միտքը Պր. Վարդգէս Եղիայեանի մօտ յառաջացած է երբ կը կարդար Օսմանեան Կայսրութեան մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Հենրի Մորկընթաուի յուշերը: Այնտեղ Մորկընթաու կը խօսի հանդիպումի մը մասին Թայլաթ Փաշայի հետ, ուր այս վերջինը Մորկընթաուէն կը պահանջէ ցանկը բոլոր կեանքի ապահովագրութիւն գնած հայերուն՝ ըսելով թէ մեռած ըլլալով անոնք եւ անոնց ժառանգորդները, թրքական կառավարութիւնը կը հանդիսանայ իրաւական տէրը այդ գումարներուն: Մորկընթաու կը մերժէ Թայլաթի պահանջը: Այս դրուագը, որ պատմուած է Մորկընթաուի կողմէ, դրդապատճառ կը հանդիսանայ Պր. Եղիայեանի սկսիլ փնտելու վերոնշեալ ապահովագրուած հայերու ցանկը: Քիչ ժամանակ անց Պր. Եղիայեան ծանուցում կը դնէ տեղական հայկական թերթերուն մէջ, ուր կը խնդրէ որ իրեն դիմեն բոլոր անոնք՝ որոնք որեւէ տեսակի կեանքի ապահովագրական պայմանագիրներ ունին ժառանգ մնացած իրենց նախնիներէն: Այս յայտարարութեան կ'արձագանգէ 85-ամեայ ամերիկահայ կին մը, ներկայիս գլխաւոր հայցուոր Մարթին Մաթթեանի քոյրը: Եւ այսպիսով Պր. Եղիայեան կը սկսի իր ուսումնասիրութիւններուն, որոնց կը յաջորդէ 1999-ին պաշտօնապէս դատական թուղթերու ներկայացումը դատարան:

Անցնող հինգ տարիներուն դատական գործընթացը եւ «Նիւ Եորք Լայֆ» ընկերութեան հետ բանակցութիւնները կ'ընթանային գուգահեռաբար: Անշուշտ դատարանին մէջ կային իրաւական խնդիրներ հարուցուած «Նիւ Եորք Լայֆ»-ի փաստաբաններու կողմէ, որոնք սակայն կարելի եղաւ մեր դատի ի նպաստ դատական որոշումներու յանգեցնել: Յեղասպանութեան պատմական իրողութեան հարցը իրաւական գետնի վրայ խնդրոյ առարկայ չէր: Որքան որ ալ հասկնալի էր որ այս դատը հետեւանք էր Յեղասպանութեան, սակայն Յեղասպանութեան փաստը ըստ հուսկութեան քննութեան առարկայ չդարձաւ: Դատաւորին իսկ բնութագրումով այս դատը կ'առնչուէր ընկերութեան մը հետ պայմանագրային խախտումի փաստին՝